ցեց և ժողովրդի բազմութիւնն եկաւ համբուրելու. միևնոյն ժամանակ ընդդիմութիւնը շարունակում էին և չէին ուզում թողնել. Հայրապետն ստիպուեցաւ ծածուկ հանել եկեղեցուց Ս. Աջն, և տանել Ջուղայի վանքը։ Այնտեղից տարաւ «Երևանցւոց» մէջ, ապա բերելով մի քարվանսարայ, ուր Ցղնայ գիւղացի Մարգար անունով մի վաճառականի յանձնեց, և ուղարկեց մինչև Թաւրէզ. Եւ այս ամէնը նա այնպիսի ծածկութեամբ կատարեց, որ Ջուղայեցիք չիմացան։ Այս անելուց յետոյ՝ կաթուղիկոսն ինքն էլ ճանապարհ ընկաւ դէպի Թաւրէզ և յիշեալ վաճառականից Ս. Աջն ստանալով բերեց հասուց Ս. Էջմիածին իւր սեփական աթոռը։ * Ստեփաննոս վարդապետ Իլովացին, որ Լեհաստանի Իլով կամ Լէմբերգ քաղաքի մեծատուն հայերից մէկի տան զաւակ էր, և Նիկոլի յարուցած խռովութիւնների ժամանակ յատկապէս ուղարկուել էր Ս. Էջմիածին Հայոց եկեղեցու ոգւով կրթուելու համար, 1657 թուին Ս. Լուսաւորչի աջի համար մի նոր պահարան շինել տուեց իրեն յիշատակ։ Այդ պահարանը շինուած է արծաթից, վրէն կան քանդակներ. այն է Ս. Լուսաւորչի պատկերն հայրապետական զգեստով, Ս. Լուսաւորչի տասներկու չարչարանքներն և ծաղիկներ ու զարդեր. ունի և

---

* Առ. Դաւ. ԻԸ։